Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարողի
2020թ. մայիսի «……»-ի թիվ__________հրամանի

Կազմված է 2020թ. ապրիլի «27»-ին և բաղկացած է 4 թերթից

Տպագրված է
ընդամենը 7 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Շրջակա միջավայրի նախարարի 2020թ. մայիսի ……

N ________ հրամանով

Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող

______________ Վ. Ջիլավյան

«Ջիկատար» բնապահպանական կենտրոն» և «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունների

# ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Ջիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրենի պարտականություններ կատարող՝ Էդգար Թամրազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրեն՝ Լևոն Գաբրիելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա կնքում են սույն **Միաձուլման Պայմանագիրն** առ այն, որ

1.Պայմանագրի կողմերը.

- «Ջիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման համարը՝ 81.210.00272, 15.04.2003թ.(փոփոխություններ են կատարվել 2014թ-ի հունվարի 9-

ին ) ՀՎՀՀ՝ 07401434, գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, գ. Կողբ, 6-րդ փողոց, 200 շենք, .

- «Արգելոցապարկային համալիր» ՝պետական ոչ առևտրային կազմակերպություն (գրանցված է Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի կողմից, գրանցման համարը՝ 423.210.02021, 26.02.2003թ-ի (փոփոխություններ են կատարվել 2012թ-ի ապրիլի 3-ին ) ՀՎՀՀ՝ 00804807, գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, Երևան-Գառնի մայրուղի, թիվ 6:

2. Պայմանագիրը կնքվում է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 մարտի 19-ի N 334-Ն որոշման:

3. «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

4. Միաձուլման միջոցով վերակազմակերպման կարգը.

Միաձուլման ճանապարհով վերակազմակերպված «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, գործունեության դադարման պետական գրանցումից հետո մեկ ամսյա ժամկետում միաձուլվող կազմակերպությունների կողմից կազմված և կազմակերպությունների կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված փոխանցման ակտեր համաձայն «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանձնում է, իսկ «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ընդունում է միաձուլվող կազմակերպությունում առկա հիմնական միջոցների նկատմամբ իրավունքները (ինչպես սեփականության, այնպես էլ օգտագործման), այլ գույքը, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները, առկա փաստաթղթերը: Հանձնում –ընդունումը կատարվում է համապատասխան ակտի (ակտերի) միջոցով, ինչը (ինչերը) ստորագրվում է (են) կողմերի լիազոր ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N133-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամների կողմից և ենթակա է (են) հաստատման Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հրամանով:

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպված են համարվում «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման պահից:

5. Սույն պայմանագրի կողմերը պարտավորվում են իրականացնել միաձուլման գործընթացի հետ կապված հետևյալ գործողությունները.

- սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 30 օրյա ժամկետում պայմանագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի հաստատմանը,

- սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 30 օրյա ժամկետում կազմակերպությունների վերակազմակերպման մասին սահմանված կարգով տեղեկացնել բոլոր պարտատերերին,

- սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 30 օրյա ժամկետում կազմել վերակազմակերպվող կազմակերպությունների գույքի, այլ գույքային իրավունքների և պարտավորությունների ստեղծվող կազմակերպության փոխանցման ակտերը և դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հաստատմանը:

6. Սույն պայմանագրի համաձայն իրականացվող միաձուլման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N133-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահը, որն օժտված չէ իշխանական լիազորություններով, իրավասու չէ կայացնել ինքնուրույն որոշումներ: Հանձնաժողովը հանդիսանում է ժամանակավոր խորհրդակցական և համակարգող մարմին, գործում է մինչև միաձուլման գործընթացի ավարտը:

7. Հանձնաժողովն իրականացնում է բոլոր անհրաժեշտ միջոցառումների համակարգումը, այդ թվում՝

- նախապատրաստում է վերակազմակերպման միջոցառումների պլանը,
- նախապատրաստում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հրամանի (հրամանների) և այլ փաստաթղթերի նախագծերը,
- միաձուլվող կազմակերպություններին ցույց է տալիս կազմակերպչական, մեթոդական և այլ օգնություն (կապված գույքագրման իրականացման և փոխանցման ակտի կազմման հետ):

Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պետք է իրականացնի նաև այլ գործառույթներ վերակազմակերպման գործընթացն ավարտելու համար:

8. Սույն պայմանագրի ստորագրումից հետո՝ կողմերն իրավունք չունեն կատարել գույքի օտարման գործարքներ՝ առանց Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի գրավոր համաձայնության:

9. Վերակազմավորման արդյունքում ստեղծվող «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթը (պարտավորությունների նկատմամբ պատասխանատվության չափը) տնօրինվում է նրա կանոնադրությամբ սահմանված կարգով՝ առանց հաշվի առնելու շահույթի ստացման (վնասների գոյացման, պարտավորությունների առաջացման) աղբյուրները և ժամկետները:

10. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը պատասխանատվություն է կրում միաձուլվող «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների պարտավորությունների համար:

11. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Զիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

12. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ երրորդ անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հրամանով հաստատելուց հետո:

«Զիկատար» բնապահպանական կենտրոն»
ՊՈԱԿ կողմից՝
կազմակերպության տնօրենի
պարտականություններ կատարող

______________________

«Արգելոցապարկային համալիր»
ՊՈԱԿ կողմից՝
կազմակերպության տնօրեն

______________________